ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԸ ԱՐԹՈ ՉԱՔՄԱՔՉՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Յուրաքանչյուր խորը արվեստագետ իր հոգու մեջ ստեղծում է աշխարհի յուօրինակ պատճեն. աշխարհն ու առարկաները ձուլվում են նրա էությանը՝ նրա հոգու խորհուրդը ենթարկելով արվեստի անբացատրելի ուժին: Ի. դարի արվեստի նոր ուղին դարերով սրբագործված պայմանականությունների հերքումն է, եւ հենց իր՝ ստեղծագործողի էությունից, նրա անհանգիստ բաբախող նյարդից, ակտիվ զարկերակից դեպի ստեղծագործությունը հոսող ավյունն է: Եթե ավանդական ստեղծագործությունը որպես կենտրոն ընտրում է փաստական աշխարհը եւ այնուհետեւ այն հագեցնում ոգով, ապա ժամանակակից արվեստը ընտրում է ավելի առույգ, կյանքաստեղծ, իդեալական կենտրոն՝ արվեստագետի ներաշխարհը, այնուհետեւ նյութականացնում այն: Այդպես է ծնվում արվեստը, մարդկային հոգու առանցքից ընդգրկելով աշխարհը: Նոր արվեստը այլեւս ազատագրված է պարտադրված նմանակությունից, կեղծավորությունից: Այն տանում է դեպի մարդկային հոգու խորքը՝ մոտենալով բուն էությանը, մտքին, հույզերին, կենսագրությանը: Իրերը ծնվում են էությունից՝ նախկին գոյություն ունեցողը վերարտադրելու փոխարեն:

Այդպիսին է Արթո Չաքմաքչյանի արվեստը՝ դրամատիկ, լարված, խորը, մելամաղձոտ, խիստ հասցեական: Այն պետք է դիտել ոչ թե աչքով, այլ մտավոր հատուկ տեսողությամբ, ինտելեկտուալ բանալիի օգնությամբ՝ խորասուզվելով նյութի մեջ մեծ ուշադրությամբ: Սա մի արվեստ է, որն օժտված է մեծ արտահայտչականությամբ:

Համաշխարհային կերպարվեստի նվաճումների լայնահայաց ուսումնասիրություններն ու ներշնչանքը Արթո Չաքմաքչյանի ստեղծագործական հիմքն են կազմում, սակայն, գերիշխող է նրա անհատականությունը դրսեւորող նոր որակը: Արվեստագետի ստեղծագործական յուրաքանչյուր շրջան հեստաքրքիր է յուրովի, ամեն մի շրջան ձեռք է բերում բացառիկ բարձր որակ:

Արթո Չաքմաքչյանի արվեստը թեմատիկ առումով խիստ բազմազան է: Ապրելով եւ ստեղծագործելով տարբեր երկրներում, ուշադրությամբ ուսումնասիրելով տարբեր քաղաքակրթությունները, արվեստագետը, այնուամենայնիվ, հավատարիմ է մնում իր ազգային խառնվածքին: Միջնադարյան հայ ճարտարապետությունը, քանդակագործությունը, որմնանկարչությունը, մանրանկարչությունը, զարդամոտիվների իմացության սկզբունքները այն աղբյուրներն են, որոնցից սնունդ է առնում քանդակագործը: Ազգային ամուր հողը կենսահաստատ ուժ է հաղորդում նրա ստեղծագործական իդեալին: Միաժամանակ նրա թե՛ մտածելակերպը, թե՛ արտահայտչամիջոցները ժամանակակից են, համահունչ մեր օրերին:

Արթո Չաքմաքչյանը Հայաստան է եկել Եգիպտոսից, ապրել եւ ստեղծագործել է հայրենիքում, իսկ ներկայումս բնակվում է Կանադայի Մոնրեալ քաղաքում: Մեծ հայրենասիրական ոգով են ներշնչված նրա ստեղծագործությունները: «Մայրը», «Հերոսիմա», «Կոմիտաս», «Նարեկացի», «Կոստան Զարյան», «Պրոմեթեւս», «Մեկը եւ Մյուսները», «Քայլող Մարդը». Ժամանակակից արվեստի ամենաբարձր նվաճումներ, յուրաքանչյուրը մի ողջ աշխարհ ներառող, մի յուրօրինակ պատկերասրահ:

Բարդ է արվեստագետի աշխարհը: Գերլարվածությամբ օժտված, անհանգիստ ֆակտուրայով, բարձր հուզականությամբ, մշտապես մտահոգ եւ հարցասեր: Ժամանակի ընթացքում մարմինը աստիճանաբար հեռացել, կորցրել է իր ֆիզիկական ձեւն ու աստվածային գեղեցկությունը, բայց ձեռք է բերել նոր ձեւ, հոգեվիճակ, սնամեջ, սակայն խիստ հոգեւոր: Մարդակերպ այս ֆիգուրներով, որոնք կազմում են նրա ստեղծագործության մի զգալի հատվածը, արվեստագետը մատնացույց է անում Մարդուն իր խնդիրներով, միայնությամբ, հասարակության հետ հարաբերվելու եւ մշտապես հակադրվելու մարդու հավերժ գոյությունը: Համաշխարհային եւ հայ փիլիսոփայության բացառիկ իմացությունների շնորհիվ Արթո Չաքմաքչյանը իր ստեղծագործություններին կարողանում է հաղորդել մի յուրօրինակ տրամադրություն, հարցեր տալու կարողություն: «Մայրը», «Ճիչը», «Կերպարը անիվի հետ» եւ այլն, իրենց միմիկաներով, ռիթմիկ անհարթ ֆակտուրայով, անմիջականորեն խոսում են դիտողի հետ:

Արվեստագետին իր ողջ կյանքի ընթացքում ուղեկցել են հայրենի բնության եւ արվեստի պատկերները, հայկական միջնադարյան քանդակագործության եւ ճարտարապետության առանձին դետալներ՝ ձուլված նրա էությանն ու մտապատկերին, ժամանակ առ ժամանակ իրենց կերպն են ստացել:

Միջնադարյան հայ քանդակագործության ուսումնասիրությամբ Արթո Չաքմաքչյանը կանգնել է ամուր հողի վրա եւ գտել է իր հոգեկերտվածքն ազատորեն արտահայտող պլաստիկ ձեւեր:

Կոմիտասի կերպարը ներշնչանքի անսպառ աղբյուր է եղել քանդակագործի համար: Եւ զարմանալի չէ, որ արվեստագետը բազմիցս անդրադարձել է այդ թեմային: Միայն ստեղծագործական տասը տարվա ընթացքում նա ստեղծել է սիրելի անհատականության քանդակների մի պատկերասրահ: Արթո Չաքմաքչյանի արվեստանոցում, որ բարձր եւ ընդարձակ սրահներ ուներ (երբ նա բնակվում էր Հայաստանում) եւ հենց Կոմիտասի անունը կրող փողոցի վրա էր գտնվում, կային բազմաթիվ «Կոմիտաս»-ներ, որ տարբեր էին մեկը մյուսից, ստեղծագործական տարբեր խնդիրներ էին առաջադրում ու լուծում, բոլորը միասին ստեղծում էին ընդհանրացված մեկ «Կոմիտաս»: Մի կերպար, որ հայ ժողովրդի անցյալ ողբերգությունը, բայց եւ նրա ստեղծագործ եւ արարիչ ոգին, անբեկանելի հավատն է խորհրդանշում: Պարզ են Չաքմաքչյանի «Կոմիտաս»-ները, պարզության մեջ խոր մոնումենտալության միտող, էքսպրեսիվ եւ իրենց խորքում ունեն այն անմեկնելին ու անբացատրելին, որ ազգային ոգի է կոչում:

Ա. Չաքմաքչյանի երիտասարդ տարիների ստեղծագործություններից մեկն էր նրա առաջին «Կոմիտասը», որը նա քանդակել է քսան տարեկան հասակում: Նա ունի տար-

բեր փարիքներում կատարված, Կոմիտասին նվիրված, մոտ երկու տասնյակ աշխատանքներ: Ժամանակակիցներից մեկը այս մասին գրում է. «Արթոն լցված է Կոմիտասով, բայց պետք է ավելի եւս լցվի, որպեսզի իրականացնի այն արձանը, որը իր երազածն է»[1]:

Կոմիտասին նվիրված բրոնզաձույլ արձանը Արթո Չաքմաքչյանի ամենավաղ գործերից մեկն է: Ողջ հասակով ,ոչ մեծ չափերի այս ստեղծագործությունը առինքնող է իր պարզությամբ: Ֆիգուրը ներկայացված է շատ ուղղաձիգ, ծածկված երկար հագուստով: Զգեստի շերտավոր ծալքերը թեթեւակի ռիթմ են հաղորդում իրանին: Առավել մանրակրկիտ է մշակված Կոմիտասի դեմքը: Չափազանց խորությամբ մշակված կոպերը ընդգծում են դեմքի հուզական տրամադրությունը, փոքր-ինչ չափազանցված, սրված դիմագծերով: Շուրթերը զուսպ հպված են, այսպիսով լիակատար լռություն հաղորդելով ողջ հորինվածքին: Լայն բացված օձիքը շեշտում է արտահայտված, նրբորեն մշակված պարանոցը: Կոմիտասի հայացքը չի հանդիպում դիտողին, բացակայում է «երկխոսությունը» դիտողի եւ արձանի միջեւ: Արթո Չաքմաքչյանի արվեստին հատուկ լակոնիզմը վառ արտահայտված է այս ստեղծագործությամբ: Իրանի նկատմամբ ձեռքը անհամեմատ մեծ է, ամփոփված կրծքավանդակին՝ արտահայտելով անձի հույզերի չափազանց զսպվածությունը:

Շատ ավելի ռեալիստական է Կոմիտասի՝ Դիտրոյթում գտնվող հուշարձանը: Այս հոյակերտ մոնումենտալ ստեղծագործությունը ուխտատեղի է դարձել սփյուռքահայ ուսանողների համար, որոնք ամեն տարի ապրիլի քսանչորսին այցի են ցալիս այստեղ:

Ռեալիստական մոտեցումը դրսեւորված է եւ դեմքի, եւ հագուստի մշակման մեջ: Զգեստի թավվող ծալքերը շարժման տպավորություն են հաղորդում ստեղծագործությանը: Մեկ քայլ առաջ դրված ոտքը եւս թվացյալ շարժման տպավորություն է ստեղծում: Բայց այնուամենայնիվ, արձանն, ամբողջությամբ վերցրած, ստատիկ է: Կերպարն իր հանգստությունն արտահայտում է ձեռքի ժեստով, որը հանգիստ հենած է կրծքավանդակին: Առանձնակի մանրամասնությամբ մշակված են դեմքը, պարանոցը:

Ամբողջ հասակով կանգնած է Կոմիտասը սեւ սքեմով: Չաքմաքչյանի արվեստում նա մնաց ոչ միայն իբրեւ կոնկրետ կերպար, այլ որպես ընդհանուր հոգեբանական խնդիր, որպես առհասարակ կերպարային սկզբունք՝ նոր մոտիվների եւ թեմաների համար նույնպես:

1965 թվականին ստեղծված Կոմիտասի կիսանդրին, վերը նշված երկու արձանների կողքին, առավել մոդեռնիստական է: Արվեստագետը այն անվանել է «Բանաստեղծ Կոմիտասը»: Աչքերի խորունկ ակոսներով, մշակված հոնքերով, որոնք դեմքին դրամատիկ, ստեղծագործ անհատին հատուկ, տիեզերական անվերջություններում սավառնող տրամադրություն են հաղորդում: Խախտված են դեմքի համաչափությունները: Արտաքին ձեւերը հարթային են, գրեթե զուրկ մշակումներից: Դեմքի ողորկ մակերեսը խախտում է քիթն արտահայտող շեշտակի փորվածքը, թեթեւակի ընդգծված այտոսկրերը: Նա ավե-

1 **Թորոս Թորանեան**, Արթո Չաքմաքճեան արուեստագետը, Հալեպ, 1989, էջ 10:

լի դիմակ է հիշեցնում, որեւէ հավաքական կերպար, քան որոշակի անձնավորություն: Աջ ձեռքը կիսափակ հենած է այտին՝ հիշեցնելով մտածկոտ, մելամաղձոտ տրամադրություն: Կոմիտասն է՝ թախծոտ եւ հպարտ, տրտում ու եղերական. Կոմիտասը ոչ այնքան մարդ, որքան՝ ոգի, մեղեդի, մի ողջ ժողովրդի խորհրդանիշ: Քանդակագործի եւս մեկ մոտեցում ենք տեսնում այստեղ: Կարծես իսկույն առինքնում է դիտողին ու տանում դեպի ոգեղեն մի աշխարհ, դեպի հայկականը: Եւ պատահական չէ, որ արվեստագետը իր ստեղծագործությունների առանցքը դարձրեց Կոմիտասի կերպարը:

Կոմիտասը հայ մարդու համար տարիներ ի վեր խորհրդանշել է հայկականն ու հայրենաշունչը, մարմնավորել խոր ու բազմավեհ մի էություն:

1961 թվականի «Կոմիտասում» մեծ արվեստագետի զգայուն էքսպրեսիայով ներծծված մոնումենտալ կերպարը ներկայացված է բգկտված, տառապող, բարձր եւ հոգեւոր ուժով միշտ վեր ձգվող երեւույթ: Այն միաժամանակ ողբերգական եւ լավատեսական խորհրդանիշ է, բարոյապես հստակ, անմիջական եւ ազդու:

Կոմիտասը անվերջանալի եւ հավերժական է, ինչպես դյուցազներգությունը, քանի դեռ ապրում է հայը: Կոմիտասի հուշարձանի համար արված բազմաթիվ էսքիզների մեջ արդեն նկատվում է նրա բնականությունը եւ հարազատ բնության հետ տրամաբանական կապը:

Հուշարձանը սեւ տուֆից է, եւ արվեստագետի ցանկությամբ պետք է դրվեր գետնի վրա՝ առանց որեւէ պատվանդանի: Ազնիվ, անփայլ տուֆն իր գույնով եւ ֆակտուրայով կներդաշնակեր շրջապատող բնությանը՝ հուշարձանը դարձնելով մի բնական մասնիկ, որ ծնվել է բնությունից: Խիստ ուրվագիծը, հարթային ֆակտուրան, պարզությունը ամենուրեք են այստեղ: Կոմիտասի կերպարի մեկնաբանումը զուրկ է արտաքին պաթոսից, պարզության մեջ է:

Բայց այլ է Կոմիտասը «Խելագարություն» քանդակում. դա մեծ ողբերգության, մեծ կորստի պատկերումն է: Եւ այսպես, շարունակ... Մեծ երգահանը անսպառ է արվեստագետի հոգում, մտքերում, էության մեջ: Բազմաթիվ են նրան նվիրված գրաֆիկական էջերը: Համեմատաբար ավելի ուշ ստեղծագործություններն ավելի անմիջականորեն կապված են Արթո Չաքմաքչյանի ներաշխարհին, նրա հույզերին, ապրումներին: «Սքեմը» եղավ այս մեծ պատկերասրահի վերջին Կոմիտասը: Սքեմ, որը երկար ճանապարհ էր անցել 60-ականների բարդ եւ անհանգիստ, հաճախ անհասկանալի եւ անբացատրելի «գրաքննություն» կոչվող պարտադրանքների տարիներին: Ի. դարի հայ արվեստագետների համար Կոմիտասի կերպարը միշտ եղել է նվիրական: Բազմաթիվ են նրան նվիրված երաժշտական, գեղանկարչական եւ քանդակագործական նմուշները: Բ. Կանաչյանը, Ա. Խաչատուրյանը, Հ. Դելլալյանը, Է. Միրզոյանը, Ե. Թադեւոսյանը, Փ. Թերլեմեզյանը, Ե. Քոչարը, Գ. Խանջյանը եւ շատ ուրիշներ, իրենց ստեղծագործության մի նվիրական էջ, միշտ ընծայել են Կոմիտասին, ապրելով նրանով, եւ ապրեցնելով իրենց անմահ ստեղծագործություններում: Սակայն «Սքեմը» եզակի է իբրեւ հոգեվիճակ, իբրեւ պատկերման ձեւ ու երեւույթ: